



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0, ԲԳ, Ձանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 1

21.01.2020թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 թ. № 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. Ձանգակատուն համայնքում 2021թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:  
(զեկուցող՝ համայնքի ղեկավար Բ.Կարապետյան)
2. Ձանգակատուն համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Ձանգակատան համայնքապետարանի և «Ձանգակատուն համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմերի 2021թ. աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:  
(զեկուցող՝ համայնքի ղեկավար Բ.Կարապետյան)
3. Ձանգակատուն համայնքի 2021թ. բյուջեն հաստատելու մասին:  
(զեկուցող՝ համայնքի ղեկավար Բ.Կարապետյան)
4. Ձանգակատուն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու և հողամասի մեկնարկային գինը սահմանելու մասին:  
(զեկուցող՝ համայնքի ղեկավար Բ.Կարապետյան)

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ՝

  
/ստորագրություն/

Հ.Գրիգորյան



/ստորագրություն/

Ա.Սարգսյան

  
/ստորագրություն/

Ա.Մայիլյան

  
/ստորագրություն/

Խ.Գևորգյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա



Կ.Տ.

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0, Գ.Ղ.Ձանգակատուն

ՈՐՈՇՈՒՄ

№ 2 Լ

21.01.2021թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.12.2020թ.-ի ԹԻՎ 28 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով, ավագանին


ՈՐՈՇՈՒՄ Է՝

Զանգակատուն համայնքի ավագանու 17.12.2020թ. –ի թիվ 28-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետը, 8-րդ կետի «ա» ենթակետը և 11-րդ կետի «ա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի


ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ՝

  
/ստորագրություն/

Հ.Գրիգորյան

  
/ստորագրություն/

Ա.Սարգսյան

  
/ստորագրություն/

Ա.Մայիլյան

  
/ստորագրություն/


Խ.Գևորգյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա



ԿՏ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

  
(ստորագրություն)

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## 1. Ձանգակատուն համայնքի տարածքում 2021թ.-ի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

1) Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր / դրամ:

բ/ սույն կետի „ա/„ ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9.000 /ինը հազար/ դրամ:

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 /երեսուն հազար/ դրամ:

գ/ ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 /իննը հարյուր/ դրամ:

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 900 /իննը հարյուր/ դրամ:

